

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարցեր

Կարդալ ներածությանը վերաբերող նյութերը եւ պատասխանել հարցերին

ՊՐՈՑԵՍ - պրոցես բառը կիրառվում է որակի վերահսկման, ծրագրավորման եւ համակարգային ինժեներիայի (systems engineering) ոլորտներում. Այս բառն ունի տարբեր իմաստներ տարբեր տեքստերում :

- ինչպես է ծրագրավորողը բնորոշում սովյալ հասկացողությունը
- ինչպես է որակի վերահսկման ինժեները բնորոշում սովյալ հասկացողությունը
- օրինակներ
- ինչ տարբերություն կա մակրո-մակարդակի եւ միկրո-մակարդակի որակի վերահսկման պրոցեսների մեջ: Բերել օրինակներ

ԿՅԱՆՔԻ ՑԻՎԼ - ընդունված է համակարգչային ստեղծման ընթացքը անվանել այդ ընթացքի կյանքի ցիկլ, որը երկու հասկացությունների միաձուլում է

- ինչ է իրենից ներկայացնում կյանքի ցիկլը
- ինչ տարբերություն կա կյանքի ցիկլի եւ պրոցեսի միջեւ: Արդյոք դրանք նույն իմաստն ունեն
- Մոդելի գրքի մեջ առաջին մասում նկարագրվում են կյանքի տարբեր ցիկլեր՝ բիզնես պրոցեսի վերակառուցում, համակարգչային կառուցում, որակի վերահսկման կառավարում կամ մենեջմենթ: Ինչն է ընդհանուր վերոհիշյալ 3 տիպերի կյանքի ցիկլերում
- Մոդելի գրքի երրորդ մասը բնութագրում է կյանքի ցիկլի մեթոդոլոգիան: Ինչումն է տարբերությունը կյանքի ցիկլի եւ մեթոդոլոգիայի միջեւ

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՆԱԼԻԶ ԿԱՍ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ առարկան ուսումնասիրելու է համակարգային անալիզը: Ինչ է այն

- Տալ համակարգային անալիզի բնութագիրը
- Ինչ կապ ունի համակարգային անալիզը որակի եւ ծրագրային պրոցեսների, կյանքի ցիկլերի եւ մեթոդոլոգիայի հետ
- Կարդալ Texas Department of Housing կազմակերպության համակարգային անալիզի աշխատանքի նկարագրությունը: Պարզաբանել, թե համակարգային անալիզը _____

- Արդյոք համակարգային անալիզի ձեր բնորոշումը սահմանվում է վերոհիշյալ հայտարարության պահանջներին: Վերոհիշյալ հայտարարության որ պահանջմունքները մնում են համակարգային անալիզի ոլորտից դուրս:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՆԱԼԻԶ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

Ինչպես պրոցեսի բնորոշումը տարբեր է կախված ոլորտի ընտրությունից, այնպես էլ համակարգային անալիզ հասկացողությունը ունի տարբերություններ՝ ելնելով ընտրված ոլորտից

- համեմատել և տարբերակել համակարգային և բիզնես անալիզները

- համեմատել և տարբերակել արտադրանքի կյանքի ցիկլի մենեջմենթը համակարգային անալիզից
- համեմատել և տարբերակել նոր արտադրանքի ստեղծումը համակարգային անալիզից

ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վերը նշված հարցերին պատասխանելուց հետո կարդալ վեբ կայքում տրված ընդհանուր դասընթացի վերաբերյալ նկարագրությունը: Աղյուսակում տրված են դասընթացի փուլերը, ընթերցման նյութը և աշխատանքների ցուցակը

- որն են դասընթացի փուլերի հիմնական գաղափարները
- նյութի ընթերցումից հետո ինչ անձանոթ կամ անհասկանալի տերմիններ կան: Տեղեկացնել այդ մասին դասավանդողին...

ԲԱՌԱՐԱՆ

ներքոհիշյալ տերմիններից յուրաքանչյուրը ունի հատուկ, տեխնիկական նշանակություն: Գտնել այդ տերմինների համարժեքները հայերենում և ռուսերենում և հիշել դրանք.

- Activity
- Business analysis
- Design
- Development
- Entry criteria
- Exit criteria
- Hardware
- Implementation
- Input
- Life cycle
- Method
- Methodology
- Metrics
- Output
- Planning
- Process (quality control)
- Process (software engineering)
- Process (systems engineering)
- Product Development
- Product Management
- Production
- Requirements
- System
- System Analysis
- Systems Analyst
- Software
- Testing